

չարժ մեքենայէ մը կ'առնու) միտցին ամէն մէկ երթևեկին՝ մէյմէկ ակռա կ'առնէ, որ է ըսել թէ 16 երթևեկով ամբողջ անգամ մը իր վրայ կը հոլովի՝ ձողը. այս ձողը անկլանաւոր քառակուսի ըլլալով, իր վրայ հոլովելովը, իրեն հետ զմիտցն ալ կը պարտցունէ, և անոր հետ առջևի ձողը և անոր վրայի գայլիկոնը. Արդ թէ որ վայրկեանին՝ ըսինք՝ միտցին ըրած բախմունքը 180^{էն} ց 200 կ'ըլլայ, ըսել է որ վայրկեանի մը մէջ գայլիկոնը առ նուազն 12 անգամ մը իր վրայ պիտի պտոյտքի:

Միտցը թէ որ իր հարուածները տայրմիայն հանդերձ ինքն իր վրայ պտուտեցնելովը և դէպ ՚ի առաջ չչարժէր, ծակը հետզհետէ խորցընելով, տեղ մը կը հասնէր որ ալ գայլիկոնը ժայռին չէր դաշեր: Իսկ թէ որ մեքենաբար ալ միօրինակ յառաջել մը տրուելու ըլլար, պէտք էր ենթադրել, որ ժայռերը ամեն մէկ հարուածին հաւասար կը փորուէին, որ այնպէս չէ: Մեքենա գէտքն իրենց գործիքը այնպէս յօրինեցին, որ փորուելուն համեմատ միայն ճիշդ առաջ քալէ: — Ուստի, միտցին ետևի դին զսպանակ մը դրին, որ երբեմն երբեմն յառաջ մղէ զվիմափոր գործին. այս ինքն է, երբոր փորուածքին ծակը 20 հարիւրորդամետր խորութեան հասնի, վիմափոր գայլիկոնին կոթը դուրս ելած բարձիկ մը ունենալով՝ կոճակի մը կը զարնուի. ասոր շարժմունքէն կեռ մը՝ որ ատամնաւոր ձողոյ մը ակռաներէն մէկուն կոթընած՝ զըսպանակը բռնած է՝ կը ցաթկէ և առաջ կը քշէ զվիմափոր գործին, մինչև որ նոյն կեռը գայ դարձեալ ատամնաւոր ձողոյն մէկ ուրիշ ակռային հանդիպի:

Այս է ուրեմն այն վիմափոր մեքենայն որ ճնշեալ օդոյն ձեռքով Ալպիքը ծակելու սահմանուեցաւ. սկզբնական դաղափարը՝ ինչպէս առաջ կարդացինք՝ Պարզէդ անգղիացւոյն է. բայց ան ժըլտեկի է որ իտալիացի մեքենագիտին ձեռքէն բոլորովին այլակերպեալ

դուրս ելաւ, և դեռ հետզհետէ նոր ու նոր կատարելութիւններ կ'առնու, որով թէ կը պարզի, թէ դուրագործածելի կ'ըլլայ և թէ աւելի զօրաւոր: Արդի պայմանիս մէջ այս քարահատ գործիքներէն մէկը՝ քսան հուժկու գործաւորի գործ կը տեսնէ. և այս բաւական չէ, այլ և այնչափ միայն տեղ կը բռնէ, որ երկու բանաւորի հազիւ կը բաւէր հանգիստ աշխատելու. անհամեմատ օգուտ ամենայն արուեստանոցաց, այլ ևս առաւել այս գործողութեան մէջ, ուր քան գայլ ինչ ամենայն՝ տեղոյ խնայմունքն է խնդրելին: Բայց այս և ուրիշ մանրայլ և այլ հետաքրքրական գիտելեաց համար կը հրաւիրենք զընթերցողս վերջին անգամ յաջորդ յօդուածին:

Կը շարունակուի:

Վեհաճանս և երկուս արաքացի
իշխանաշորաց.

Մամուն անունով մփրապետին ամենասիրելի պաշտօնեաներէն մէկը, Ալի-Իպն-Ապպա՝ կը պատմէ այս յաջորդ դէպքը որ իր գլխէն անցեր էր:

« Օր մը, կ'ըսէ, երբոր Մամուն մփրապետին պաշտօն էի, յանկարծ իրեն դիմացը երիտասարդ մը բերին, ձեռքերը և ոտքերը չլթայ զարկած: Ամփրապետն ալ յանձնեց ինծի որ աս բանտարգելոյն վրայ մասնաւոր կերպով աչք ունենամ որ չըլլայ թէ փախչի, և յաջորդ օրը կանուխ ներկայացնեմ զինքը նորէն իրեն դիմաց: Բայց ինծի սաստիկ կիրք ելած տես, նուեցաւ Մամուն, և վախէս որ չըլլայ թէ յանկարծ ես ալ իրեն բարկութեաւ նը զոհ ըլլամ, մտածեցի որ աս չլթայալ կապ երիտասարդը տունս տանիմ, ու հոն ապահով տեղ մը փակեմ զինքը, որպէս զի քովս ըլլալով սիրտս հանգիստ ըլլայ որ անկէց փախչիլ չկրնար:

Այսպէս երիտասարդը տունս բերելէն ետքը, հարցուցի իրեն ո՞ր տեղացի ըլլալը, որուն պատասխան տուաւ թէ « Դամասկացի եմ, և թէ մեծ մզկը-թին փողոցը կը բնակէի » : Աս որ լսեցինէ, սիրտս ուրախութեամբ լեցուած կանչեցի մէկէն . « Ա՛հ, օրհնէ երկինքը այդ Դամասկոս քաղաքը ամեն տեսակ բարիքներով, և մասնաւորապէս քու կին բնակած փողոցը » : Աս խօսքերուն վրայ բանտարկեալ երիտասարդին հետաքրքրութիւնը շարժելով ուղեց ինծմէ պատճառը իմանալ . որուն պատասխանեցի, թէ, « Ես քուկին փողոցը բռնակող մարդու մը կենացը պարտական եմ » :

« Աս խօսքերս երիտասարդին հետաքրքրութիւնը ալ աւելի շարժեցին, և բանը աղէկ հասկընալու համար խընդրեց ինծմէ որ միտքս որոշ կերպով հասկըցնեմ իրեն . ես ալ խօսքս շարունակելով ըսի . « Ասկէ քանի մը տարի առաջ Ամիրապետը գոհ չըլլալով Դամասկոսի քաղաքապետէն, ստիպուեցաւ զինքը ձգել պաշտօնէն, ու քիչ ատենէն տեղը ուրիշ մը դրաւ : Երբոր ես աս դրուած քաղաքապետին հետ առաջիկանին պալատը գացի՝ հոն փոխադրուելու համար, յանկարծ երկուքին մէջ վէճ մը ծագեցաւ և առաջին քաղաքապետը զինուորներ դարանած ըլլալով՝ հրաման տուաւ որ մեր վրայ յարձակին : Աս որ տեսայ ես, ամեն բան թողուցի, ու աճապարելով պալատին պատահանէն դուրս ցատկեցի կեանքս խալըսելու համար, և անդադար վազելով հասայ մինչև քու փողոցը . հոն պալատի մը դուռը բաց գտնելով՝ ներս մըտայ, և տանտիրոջը՝ որ դրանք քով նստած էր, աղայեցի որ կեանքս ազատէ . ան ալ մեծ մարդասիրութեամբ ընդունելով՝ շուտ մը տարաւ զիս իրեն պալատին վերի յարկը ամենապահով տեղ մը, ուր որ իրեն կնիկները կը կենային, և հոն ամիսի մը չափ ամենայն հանդատութեամբ պահեց զիս :

« Օր մըն ալ իմացուց ինծի իմ բարերարս՝ որ ան օրերը զէպ 'ի Պաղտատ

իմ հայրենիքս՝ կարաւան մը կը պատրաստուի երթալու, որով եթէ փափաք ունենայի իմ հայրենիքս դառնալու աս կէ յարմար առիթ չէի կրնար գտնալ . բայց որովհետեւ քովս ամենեւին ստակ չունէի, ամօթէս ձայն չկրցայ հանել, միանգամայն իմ բարերարիս ալ ծանրութիւն չէի ուզեր ըլլալ . բաց այս բանէս մեծ մտածութիւնս ան էր որ եթէ երթալ ուզենայի, ստակ չունենալովս՝ պէտք էր որ կարաւանին հետ հետեակ երթամ, որ բանիս ձեռք չէր տար : Ուստի մինչդեռ ես այս մտածութիւններով հայրենիքս դառնալու պատրաստութիւն կը տեսնայի, զարմանքէս խելքս գնաց գլխէս, երբոր կարաւանին հետ ճամբայ ելլելու օրս իմ բարերարս բերել տուաւ ինծի գեղեցիկ ձի մը, ջորի մը աղէկ բեռնաւորուած տեսակ տեսակ ու տեղիքներով, և ծառայ մ'ալ որ ճամբան հարկաւոր եղած ծառայութիւնները ընէ ինծի . ասոնց վրայ քսակ մ'ալ ոսկի դրաւ ձեռքս, ու մինչև կարաւանը ինքը անձամբ եկաւ հետս մէկ տեղ և յանձնեց զիս իրեն ճամբորդ բարեկամներուն : Ահաւասիկ ասոնք են անմոռանալի բարիքները, որ ես քուկին քաղաքը գտայ . ուր էր թէ կարենայի ես ան մարդը գտնալ, որ ինծի աս մեծամեծ բարիքներն ըրաւ . ա՛հ, գոհ սրբտով հիմայ աս վայրկենիս յանձն կ'առնէի մեռնիլ, բաւական է որ կերպով մը կարենայի ցուցնել իրեն սրտիս երախտագիտութիւնը, որուն միշտ պարտական եմ » : — « Բու սրտիդ փափաքը կատարուած է, կանչեց մէկէն բանտարգել երիտասարդը բոլորովին այլալաժ, ես եմ ահաւասիկ այն մարդը որ գեղ իմ տունս պահեցի, չես ճանչնար զիս » : Եւ որովհետեւ աս զէպքին վրայ բաւական ժամանակ անցեր էր և միանգամայն սրտին ցաւէն տագնապած երեսին գծագրութիւնն ալ քիչ շատ փոխուած էր, չկրցայ զինքը ճանչնալ . բայց ան միջոցուան պատահած դէպքերը տեղն 'ի տեղը ինծի պատմելով, ամենեւին տարակոյս չմնաց քովս որ զիս մահուրէն ազատողը ինքը ե.

դած ըլլայ։ Այլ ամեն բան մոռցած՝ աչքս լեցուեցաւ արցունքով և չղթաները պաղնելով չէի կրնար բաժնուիլ իրմէ՝ իմ սրտակից բարերարէս։ Վիզը պըլլուած կը հարցընէի իրեն, այսպէս շրջթայակապ բանտարգելութեան պատճառը, որուն ցաւալից կերպով պատասխան տուաւ ըսելով. « Անդու՞թ և անխիղճ թշնամիներս՝ վրաս սուտ ու անիրաւ ամբաստանութիւններ ընելով, հանցեցին զիս ամիրապետին աչքէն, և աս դժբաղդ վիճակիս հասուցին. ան կերպով արստրել տուին զիս իմ հայրենի քաղաքէս, որ կնոջս և սիրելի որդւոցս՝ նաև վերջին համբոյրը արժանի չեմ եղած տալու. գլխուս դալկը թէպէտ զեռ չեմ դիտեր, բայց թէ որ յանկարծ մահուան դատաւիճիւր կարդալու ըլլան ինծի, այս մէկը միայն կը խնդրեմ քեզմէ, սիրելիդ իմ, որ այս դժբաղդ լուրը զոնէ իմացընես իրենց »։

« Ապահով եղիր, սիրելիդ իմ, քու կենացդ վրայ, ըսի իրեն. քեզի խօսք կու տամ, որ չէ թէ միայն չես մեռնիր, այլ նաև մեծ պատուով քուկին հայրենիքդ պիտի դառնաս »։ Աս ըսելով՝ քակեցի շուտով ձեռքը ու ոտքը եղած շրջթաները, և Պաղտատի ամենէն յարգի դիպակներէն տալով իրեն որ կնոյր ընծայ տանի, ու միանգամայն ալ ձեռքը քսակ մը ոսկի զնելով, « Փախիր, գնա քու քաղաքդ, ըսի, մի վախնար ամենեւին որ ամիրապետին ձեռքը պիտի իյնաս. թող թափէ Մամուռն իմ վրաս իր բարկութիւնը, ամենեւին փոյթս չէ. ուրախ և գոհ սրտով կը մեռնիմ ես քեզի համար, տեսնալով որ դուն երջանիկ ես »։

« Ինչ կ'ըսես, երանգ կը տեսնաս, սիրելիդ իմ, պատասխանեց անդիէն բանտարգել երիտասարդը։ Միթէ կըրնամ ես այնչափ նուաստ և անգութ ըլլալ, որ զիս ազատելուս քու կենացդ կորստեանը պատճառ ըլլամ. այն կենաց՝ որուն ազատութեանը, ատենօք ես եղած եմ պատճառ։ Չէ, սիրելիդ իմ, այդ բացարձակապէս չեմ կրնար յանձն առնուլ. և թէ որ քեզի ըրած

բարեացս փոխարէնը ինծի ընել կ'ուզես, այս միայն կը խնդրեմ ես քեզմէ՝ գնա խօսէ ամիրապետին հետ, և իմ անմեղութիւնս հասկըցուր իրեն »։

« Աս խօսքերը երիտասարդը լսեցընէ. լէն ետքը, նորէն յորդորեցի զինքը փախչելու, բայց անօգուտ տեղը աշխատեցայ, վասն զի քոլորովին մերժեց առաջարկութիւնս։

« Յաջորդ օրը ներկայացայ Ամիրապետին որ կրակի գունով վերարկու մը հագեր էր, ամենեւին իր վայրագութեանը նման։ Հագիւ թէ տեսաւ զիս, հարցուց մէկէն, թէ ուր է երեկուան կալանաւորը. և միւս կողմանէ հրաման տուաւ պաշտօնեաներուն որ դահիճը շուտով կանչել տան։ Աս որ լսեցի՝ արիւնս պաղեցաւ երակներուս մէջ, և քոլորովին այլայլած՝ ոտքը ինկայ, ըսելով. « Գիտնաս, Տէր իմ Մամուռն, որ ինծի յանձնած բանտարգելոյն գլխէն արտաքոյ կարգի բան մըն է անցեր, որով համարձակեր եմ գալ պատմել քեզի »։ Աս խօսքերուս վրայ Մամուռն կատաղութենէն կրակ կտրած, « Գիտնաս ով անօրէն, ըսաւ ինծի, որ եթէ բանտարգելը փախեր է, դուն իրեն տեղը պիտի մեռնիս »։ « Երկուքներուս ալ կեանքը քու ձեռքդ է, Տէր իմ Մամուռն, պատասխանեցի իրեն, բայց այս միայն կը խնդրեմ քեզմէ որ հրաման տաս ինծի որ եղածը տեղն 'ի տեղը պատմեմ քեզի »։ — Խօսէ ուրեմն, ըսաւ Մամուռն։ — Ան ատեն ես ալ պատմեցի իրեն թէ ինչ կերպով անմեղ բանտարգելը ազատեց իմ կեանքս, երբոր Դամասկոս քաղաքն էի, և թէ 'ի փոխարէն ինծի ըրած բարեացը, ես յորդորեցի զինքը որ փախչի քու ձեռքէդ, բայց որպէս զի իմ կեանքս վտանգի մէջ չկնայ, յանձն չառաւ փախչելու։ Ասկէ կրնաս չափել, տէր իմ Մամուռն, որ խեղճ երիտասարդը քոլորովին անմեղ է, և թէ սուտ են իրեն վրայ եղած ամբաստանութիւնները, որոնք ուրիշ բանէ առաջ չեն դար, բայց եթէ չարասիրտ մարդկանց նախանձէն, որոնք անգլխութեամբ ուզեր են զինքը

անիրաւ տեղը քու աչքէդ հանել» : Աս խօսքերս կարծես թէ ամիրապետին գուլթը շարժեցին , որ որչափ կըքոտ մարդ էր , բայց ուրիշ կողմանէ ալ վեհանձն էր ու մեծասիրտ , որով չէր կըրնար անտարբեր ըլլալ , և չգարմանալ իմ բարեկամիս այսպիսի կարգէ գուրս ըրած բարերարութեանցը վրայ : « Գուսիրոյդ համար թողութիւն կու տամ և կ'արձըկեմ զինքը , պատասխանեց ինծի Մամուն . գնա՛ արձըկէ զինքը շղթաներէն , բայց բաէ իրեն որ ինծի գայ » : Աս ըսելէն վերջը նորէն ոտքը ինկայ , և իրեն ամենայն յարգութիւններս ընելէն ետքը՝ մեծապէս շնորհակալ եղայ՝ և տուն դառնալով , երիտասարդը հետս ամիրապետին դիմացը բերի , որուն մեկէն պատուաւոր զգեստներ հագցընելով , տասը ձի , տասը ջորի և տասը ուղտ պարգև տուաւ իրեն . աւսոնց վրայ նաև քսակ մը լեցուն տասը հազար ոսկիով տուաւ ձեռքը ճամբու ծախքի համար , ու նաև յանձնարարական թուղթ մը տուաւ որ տանի Դամասկոսի քաղաքապետին :

Ազգային քանաւորեղծք

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն Ե Ջ Ն Կ Ա Ց Ի

Ազգային երգոց և երգչաց վրայ շատ և շատ անգամ խօսուած է թէ մեր և թէ ուրիշ ազգային օրագրաց մէջ . բայց այն մեր ազգային կամ ռամկական ըսուած երգաբանից ոչ թիւր գիտեմք , ոչ անունները և ոչ ժամանակը : Թիւր չեմք գիտեր , վասն զի շատ հեղ նոր ձեռագիր տաղարանի կամ ուրիշ գրոց մէջ դեռ անճանօթ երգիչներու կը հանդիպինք , և մեր լեզուին նոր (մեծ կամ պզտիկ) գրող մ'ալ 'ի լոյս կու գայ : Անուններն ալ չեմք գիտեր շատին . վասն զի շատ հեղ առանց հեղինակի անուան գրուած են երգերն . որով ժամանակն

ալ անյայտ կը մնայ , և միայն ձեռագրին հետքերէն կամ ուրիշ պարագաներէ կրնանք գուշակել հեղինակին ատենն ալ : — Մնուան և ատենուան պակասութիւնը այնչափ ցաւալի չէ մեզի , որչափ ուրախալի է երգածներուն մնալը . և ըստ այսմ յետ այնքան կորստեան և թաքստեան գրոց մերոց , դեռ ոչ քիչ երգք և երգաբանք կը մնան , և օրէ օր ալ կը յայտնուին . որով մեր վերջին կամ նոր դարուց գրականութիւնն ալ կ'աճի կամ կը հարստանայ : Վերջին դարը ըսելով՝ կ'իմանամ մեր ընտիր լեզուով և ոճով գրող հեղինակաց ժամանակէն ետքը , որ կը հասնի մինչև 'ի կէս ԺԳ դարու կամ անոր վերջը . կամ շատ շատ ցկէս ԺԳ դարու , յորում դեռ քանի մը և յետին մաքուր գրաբառ գրողք կ'երևին . անկէ ետև կամ դասական լեզուի անհմտութիւն , կամ ռամկական դարձուածք ոճի և բառից՝ նոր գրականութիւն մը կ'ընծայեն : Այս նոր և վերջին դարուց գրականութիւնն որչափ ալ աղքատ և ցած է և նախնեաց շնորհքէն զուրկ , միայն ազգային կամ ռամկախառն երգերով ու տաղերովը՝ առաւելութիւն մ'ունի . յիրաւի ասոնց մէջ ալ չկայ մեր ոսկեղէն և արծաթի ըսուած դարուց քերդուածոց շնորհքը և վսեմ լեզուն , սակայն ունին ասոնք (ետքիներս) ալ իրենց յատուկ իսկատիպ շնորհք մը . և երբեմն ռամկական կամ աշխարհաբառ երգեր աւելի ախորժալուր և աւելի ողորկ կու գան լսելեաց . վասն զի աւելի բնական և հասարակաց լեզուով արտադրած և երգած են՝ քան արուեստով կռած և կոկած այն բարձր և ծանր լեզուն , որուն բաական գիտութիւն չունէին այդ վերջին գրողքն : Դարձեալ այնպիսի նիւթերու վրայօք գրուածք կան այս մեր ռամիկ ըսուած լեզուաւ , որ հին լեզուին մէջ չգտուելով՝ չեմք գիտեր թէ անով ինչպէս կը բացատրուէր 'ի նախնեաց : Վերջապէս թէ և երբեմն հայկական լեզուին գտութիւնն ալ պահած չեն նոր վիպասանք , այլ և օտար (թուրք , արաբ և պարսիկ) լեզուաց բառերով